


ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ՀԱՅ ԵՐԵՍՓՈՒՍԱՆԱՅ

ՎԵՀԱՓԱՌ ԿԱՅՍԵՐ ՆԵՐԿԱՅԱՆԱԼԸ



Ռուսաց Կայսերական ցեղին միութեան կէտ մը եղաւ այս ամառ Խրիմու եալթա քաղաքը, որոյ քովն է արքունի փառաւոր պալատն ու դրախտը: Հոն Վեհափառ Կայսրուհին Թագաժառանգ պայազատաւն եւ միւս Իշխանազն որդեկօք եկաւ իւր առողջութիւնը վերանորոգելու:

Հոն հասաւ յետոյ ծովաչու ճանապարհորդելով եւ Վեհափառ Կայսրը, որում եւ ընդառաջ ելին իւր բարձրապատիւ եղբարքն Կոստանդին եւ Միքայէլ Փոխարքայ Իշխանները, մին իվեհաստանէ եւ միւսն իւրաստանէ, իտեսութիւն Օգոստափառ Ինքնակալին եւ Կայսերական ընտանեացն:

Հարաւային Ռուսաստանի քաղաքները փութացան իրենց Վեհափառ Տիրոջն ունեցած հաւատարմութիւնն ու սէրը նուիրաբերել իձեռն երեսփոխանաց իւրեանց:

Մեր Նախիջևանի պատուարժան հասարակութիւնն ալ մասնակից եղաւ այս եռանդեան, եւ Վեհափառ Կայսեր ընդառաջ յուզարկեց իբրեւ պատգամաւոր իւր չորս պատուաւոր քաղաքացիքը, որ էին Սաղաթիէլ աղա Քոյալեան, Փոխանորդ քաղաքագլխոյն Նախիջևանի եւ առաջին կարգի վաճառական, Մատթէոս աղա Երէցփոխեան, առաջին կարգի վաճառական, եւ երէցփոխան Ս. Գէորգ եկեղեցւոյ ինախիջևան, Ղազարոս աղա Երէցփոխեան, երկրորդ կարգի վաճառական, Գաբրիէլ աղա Փէշէքերեան, երրորդ կարգի վաճառական եւ երէցփոխան եկեղեցւոյն Կերչի:

Այս մեծարգոյ վաճառականները հոկտեմբեր ամսոյս 24-ին պատիւ ունեցան ներկայա-

նալ Վեհափառ Կայսեր, որ ղերենք արժանաւորապէս ընդունելով՝ շնորհակալ եղաւ Հասարակութեան որ իրեն նուէր կըրկէին աղ եւ հաց, իրենց խոնարհ հպատակութեանը նշան: Շնորհակալ եղաւ նաեւ որ իւր Թագաժառանգ որդին այնպիսի փառօք ընդունած էին օգոստոսի 11-ին: Եւ երբ պատգամաւորաց մէկը, Մատթէոս աղայն, յայտնեց քաղաքացւոց փափաքը որ ուրիշանգամ բաղդ ունենան ընդունելու նաեւ զնորին Վեհափառութիւնը, Օգոստափառ Կայսրը յիշատակեց նոցա որ արդէն ինքն ուրիշ անգամ Նախիջևանցոց սէրը վայելած է դեռ Գահը չեղած, եւ թէ յոյս ունի որ առիթ կ'ունենայ ուրիշ անգամ եւս Նախիջևանցոց սիրալիր հպատակութեանն արգիւնքը տեսնել:

Այսպիսի քաջալերական խօսքեր լսելով՝ դարձան այն մեծարգոյ պատգամաւորները, որ իրենց պատուական քաղաքացւոց հաղորդեն Վ. Ինքնակալին անարգամեծար սէրը:

Թէ ոգոսիայէն անցնելու ժամանակնին՝ Նախիջևանու մեծարգոյ պատգամաւորները այցելութեան ելան Խալիպեան Ուսումնարանին. որոց մէջ աղա Սաղաթիէլն Քաջալով՝ առաջին անգամն էր որ տեսութեան կուգար Ուսումնարանին:

Գեր. Վերատեսուչն ընդառաջ ելաւ Նախիջևանի պատգամաւորացը. ուրախակից եղաւ՝ Նախիջևանի բարեկրօն հասարակութեանը որ Կայսերական շնորհը վայելեր էին, ուրախակից եղաւ նաեւ աղաներուն՝ որ արժանի եղեր էին իւրեանց հասարակութեանը պատգամաւորներն ընտրուելու, եւ

աղգին ներկայացուցիչքն լինելու առաջի վեհափառ Ինքնակալին :

Յետոյ Ուսումնարանին երեք գտախիոնն ալ տարաւ մի առ մի ցցուց իւր մեծարգոյ հիւրերուն, որ ամէն բան տեսնելէն ու քանի մը ժամ աղգային կարեւոր խնդրոց վերայ խորհելէն ու խօսակցելէն յետոյ, ճանապարհ ելան գէպ ինախիջեւան :

Թէոդոսիա քաղաքն եւս զրկեց իւր պատգամաւորները ընդառաջ վեհափառ Կայսեր, որոց մէջ ուրախ եմք որ մեր աղգէն եւս ընարուած էր մեծարգոյ Մանուկ աղայն Ալթունճեան, պատուամեծար քաղաքացին :

Վեհափառ Կայսրը զիրենք ընդունած ժա-

մանակին բարեհաճեր է հարցանել նաեւ Խալիպեան Ուսումնարանին որպիսութիւնը, աշակերտաց թիւը, եւ ներքին հանդամանքները :

Այս Կայսերական յիշատակութիւնն ընդունելով Ուսումնարանս իմեծարգոյ պատգամաւորաց իւրոց, մեծ ուրախութիւն զգացին թէ մեծաւորքն թէ վարժապետք եւ թէ աշակերտք, որոց խրախոյսը մանաւանդ պէտք է կրկնապատկուի իսէր առաքինութեան եւ ուսման, տեսնելով որ վերադիտող եւ հսկող Այք մը կայ որ իրենց վրայ բարձրէն կսպասէ եւ կքաջալերէ յառաջ ընթանալու եւ լինելու ընտիր հպատակք եւ պատուաւոր եւ առաքինի անդամք Աղգին :

Մ Ե Ք Ե Ն Ա Ն Ե Ր Ո Ւ Օ Գ Ո Ւ Տ Ը .

Հետեւեալ ճիշդ հաշուովը կրնան խմանալ ընթերցողք թէ մեքենաները սրչափ օգտակար են եւ սրչափ ուժոյ խնայողութիւն կամատակարարեն :

1°. Քարահանքէ մը հաստաբետ քար մը հանեցին, որոյ ծանրութիւնն էր . . . 1080 ֆիւրկրաւ (1).

2°. Այս քարը տեղէն շարժելու համար պէտք էր ուժ 758 »

3°. Երբ քարը փայտէ մակարդակի մը վրայ գրին եւ սկսան քաշել, պէտք եղաւ . . . 652 »

4°. Երբ քարը փայտէ հարթաձեւի (plate-forme) մը վրայ առին եւ սկսան երկու գերանաց վրայէն քաշել, այնուհետեւ պէտք եղաւ . . . 606 »

5°. Երբ թէ մակարդակին եւ թէ գերաններուն օճառ (ասպրն) քսեցին, որով մակարդակն սկսաւ գերանաց վրայ սահիլ, պէտք եղաւ միայն . 182 »

6°. Նոյն քարը երբ երեք բխշափ տրամագիծ ունեցող գլաններու վրայ առին, քարահանքին գետնին վրայ

քաշելու համար պէտք էր . 54 ֆիւրկրաւ .

7°. Երբ գլաններու տակ տախտակէ մակարդակ մը գրին եւ սկսան քաշել՝ պէտք եղաւ 28 »

8°. Վերջապէս, երբ քարը գրին հարթաձեւի մը վրայ, շարժեցին գլաններու վրայ որայն հարթաձեւին եւ տախտակէ մակարդակին մէջտեղը դրուած էր, այն ատեն պէտք եղաւ 22 »

Այս հաշուէն ահա կխմացուի որ քարահանքին հողոյն վրայ քարը շարժելու համար պէտք է այնպիսի ոյժ գործածել որ ծանրութեանը գրեթէ $\frac{2}{3}$ է. մակարդակներու վրայ շարժելու համար պէտք է $\frac{2}{3}$. մակարդակի մը վրայ սահող հարթաձեւին վրայ որ քաշենք՝ պէտք է $\frac{1}{10}$. իսկ եթէ մակերեւոյթն օճառենք՝ պէտք է միայն $\frac{1}{10}$: Եթէ գլաններ գործածեմք՝ պէտք կլինի քարահանքին մէջ ծանրութեան $\frac{1}{32}$ ուժ մը, մակարդակներու վրայ՝ $\frac{1}{40}$, հարթաձեւի մը վրայ $\frac{1}{30}$:

Ահա կհասկնաս որ գլաններուն հանճարողը՝ ուժը հնգապատիկ աճեցընելու հնարքը գտեր է. ըսել է թէ առաջ լինչ ուժ որ պէտք էր՝ անկէց հինգ անգամ պակաս :

(1) Սեկ ֆիւրկրան է 2 ֆունթ, 42 գրոբնիք եւ 40 մասնիկ :